# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բաղրամյան համայնք
Գ.Բաղրամյան, Արտաշատյան խճուղի 4, 023560074;/077/796060

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 ապրիլի 2012թվականի N 4

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 27.05.2009Թ. ԹԻՎ 4/1 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ "ԲԱՂՐԱՄՅԱՆԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ" ՈՉ ԱՌԵՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ։

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2012թ. փետրվարի 2-ի թիվ 54 արձանագրային որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին թիվ 4 որոշմամբ և հիմք ընդունելով ՀՀ Արարատի մարզպետի 23.02.2012թ. թիվ 1/746-12 գրությունը «Բաղրամյանի նախադպրոցական ոչ առևտրային կազմակերպության» կանոնադրության 3-րդ բաժնի 17-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«17. Հաստատություն ընդունվում են մինչև վեց տարեկան երեխաները՝ նախադպրոցական պետական կրթական չափորոշիչներով սահմանված տարիքային հենքի և անհատական զարգացման առանձնա -հատկությունների հիման վրա ձևավորված խմբերում: Տարիքային հենքի վրա խմբերի ձևավորման ան-հնարինության դեպքում ձևավորվում են տարատարիք /խառը/ խմբեր, որոնց գործունեությունն իրակա-նացվում է կրթության պետական կառավարման լիազոր մարմնի գերատեսչական ակտերի պահանջ-ներին համապատասխան։»:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱԼՍՏՅԱՆ ԵՐՎԱՆԴ
2. ՀԱԿՈԲՅԱՆ ԳԵՒՈՐԳ
3. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԱՇՈՏ
4. ՂԱՄԲԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ
5. ՄԻՆԱՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՍԻԿ ԲԵՆՅԱՄԻՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բաղրամյան համայնք
Գ.Բաղրամյան, Արտաշատյան խճուղի 4, 023560074;/077/796060

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ապրիլի 2012թվականի N 7-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ 2012Թ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով " Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով

1. Բյուջեի եկամտային մասից պակասացնել ծնողական գումարը 740,0 հազ.դրամով՝ մանկապարտեզը ոչ առևտրային կազմակերպություն դառնալու կապակցությամբ:
2. 740,0 հազ. դրամը պակասեցնել վարչական բյուջեի պահուստային ֆոնդից՝ 11.01.02.51 ծրագրի 4891 հոդվածից:
3. 4447.2 հազ.դրամը պակասեցնել նախադպրոցական ուսուցում 09.01.01.51 ծրագրի ծախսային մասից մանկապարտեզի հետևյալ հոդվածներից՝ 4111 -- 2056,6 հազ.դրամ; 4131 -- 1045,6 հազ.դրամ; 4221 -- 20,0 հազ.դրամ; 4261 -- 80,0 հազ.դրամ; 4266 -- 25,0 հազ.դրամ;4267 -- 1220,0 հազ.դրամ
4. 4447,2 հազ.դրամը նախատեսել 4239 հոդվածով:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳԱԼՍՏՅԱՆ ԵՐՎԱՆԴ
2. ՀԱԿՈԲՅԱՆ ԳԵՒՈՐԳ
3. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԱՇՈՏ
4. ՂԱՄԲԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ
5. ՄԻՆԱՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՍԻԿ ԲԵՆՅԱՄԻՆՅԱՆ